

# Կառուցողական

{'0', '1'} սիմվոլներից բաղկացած տողի բնութագրիչ քառյակ կանվանենք (a, b, c, d) բնական թվերի քառյակը որտեղ.

- a -ն հավասար է այդ տողի այն 3 երկարությամբ ենթատողերի քանակին, որի թվերի գումարը հավասար է 0 ,
- b -ն հավասար է այդ տողի այն 3 երկարությամբ ենթատողերի քանակին, որի թվերի գումարը հավասար է 1 ,
- c -ն հավասար է այդ տողի այն 3 երկարությամբ ենթատողերի քանակին, որի թվերի գումարը հավասար է 2 ,
- d -ն հավասար է այդ տողի այն 3 երկարությամբ ենթատողերի քանակին, որի թվերի գումարը հավասար է 3 :

Ձեր խնդիրն է տրված քառյակի համար կառուցել այնպիսի տող, որի բնութագրիչը կլինի հենց այդ քառյակը: Քանի որ պատասխանը հնարավոր է միակը չլինի պայմաններին բավարարող ցանկացած տող կընդունվի որպես ճիշտ պատասխան:

## Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին և միակ տողում տրված են չորս թիվ a, b, c, d :

## Ելքային տվյալներ

Տրված բնութագրիչով որևէ տող: Եթե այդպիսի տող գոյություն չունի պետք է արտածել IMPOSSIBLE :

## Օրինակ

**Մուտք.**

2 5 2 4

**Ելք.**

111110001000111